ՏՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

ՑԵՐԱՄԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԿՈՂՈՄԱ ՈՒՂԵՎՈՐՈՎ ԸՆԹԱՑՔՈՎՄԸՆԴՈՒՆԵՑՎԱԾ ՀՈԳԵՀԱՆԳԻՍԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՊՐԻԼՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ այցելեց Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական և հոգևոր այրեր, օտարերկրյա դիվանագետներ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Տաճարի հարևանությամբ՝ Ապրիլյան նահատակաց հիշատակին կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Այնուհետև Վեհարանում Նորին Սրբությունն ընդունեց ֆրանսահայ հայտնի նկարիչ Ժանսեմին, որը Մայր Աթոռ էր այցելել իր զավակների և թոռների հետ՝ Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդվարդ Նալբանդյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը սիրով ողջունելով հյուրերին՝ իր հիացմունքը հայտնեց Ժանսեմի արվեստի և մասնավորապես նույն օրը Հայոց ցեղասպանության թանգարանում նկարչի բացված ցուցահանդեսի առիթով:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նկարչին առաջարկեց ստեղծել Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ավագ Խորանի Տիրամայրը Մանկան հետ սրբանկարը:

Շնորհակալություն հայտնելով պատվաբեր առաջարկի համար՝ մեծանուն նկարիչը նշեց, որ չափազանց դժվար է նման պատկերի ստեղծումը, սակայն ինքը կաշխատի առավելագույնն անել հաջողության հասնելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ